(Փարսի գործակալութեան հեռագիրներ)

Հայութեան ներգաղթը եւ Թիւրքիան

Ֆրանսական գործակալութիւնը հաղորդում է Անգորայից.— Թիւրքահպատակ հայերի՝ Խ. Հայաստան ներգաղթելու ծրագիրը մեծ գրգռում է առաջացրել Թիւրքիայի հանրային մտքի մէջ և կարող է պատահել, որ նորէն արծարծւի ցեղային և կրօնական փոքրամասնութիւնների հարցը։ Թիւրք մամուլի մեկնաբանները դէմ են նրանց մեկնելուն։ Ստամբուլի հայ թերթերը մեղադրում են թիւրք կառավարութեան, թէ նա թիւրքահպատակ հայերին համահաւասար չի դասել թիւրքերի հետ: Նոյն թերթերի ասութեամբ, եթէ հայերը նոյն՝ թիւրքերի իրաւունքները և առանձնաշնորհումներն ունենային, անկասկած նւազ կարիք պիտի զգային գաղթելու Թիւրքիայից։ «Թանին„ թերթը պատասխանելով նրանց, դիտել է տալիս, թէ մի լրագրող Խ. Հայաստան նում նման մի յօդուած գրելու դէպքում, թերևս նրա ուղեղը ցւրւէր գնդակի հարւածով։

Թիւրք շրջանակները արամադիր են, որ Խ. Հայաստան մեկնելու համար արձանագրուած հայերը որքան կարելի է շուտ ճանապարհւեն և մինչևիսկ կարող է պատահել, որ նրանց մեկնումը յապաղման ենթարկւելու դէպքում խիստ որոշումներ տրւեն նրանց վերաբերմամբ և այդ ձևով մի նոր թիւրիմացութիւն առելացնեն թիւրք-խորհրդային տարաձայնութիւնների վրայ։